ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի
2024 թվականի հունիսի 24-ի նիստի
թիվ 05 արձանագրության թիվ 9 որոշմամբ

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Պատասխանատու ստորաբաժանում	Գանձապետարան
Ուժի մեջ մտելու ամսաթիվը	03.07.2024թ.
Տարածում	Գործառնական տնօրինություն Գանձապետարան
Այլ դրույթներ	Սույն կարգը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Խորհրդի 2023թ. դեկտեմբերի 22-ի թիվ 10 արձանագրության թիվ 27 որոշմամբ հաստատված «Արժեթղթերով գործառնությունների իրականացման» կարգը
Առնչվող փաստաթղթեր	ՀՀ քաղաքացիական օրենսգիրք «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք «Ակտիվների և պարտավորությունների կառավարման» կարգ «Կոմիտեների գործունեության» կարգ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ....3

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ....3

ԳԼՈՒԽ 3. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ....5

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ....8

ԳԼՈՒԽ 5. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ....9

ԳԼՈՒԽ 6. ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ....10

ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....10

ԳԼՈՒԽ 8. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ....11

ԳԼՈՒԽ 9. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ և ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ....11

ԳԼՈՒԽ 10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ....12

ԳԼՈՒԽ 11. ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ....13

ԳԼՈՒԽ 12. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ....15

ԳԼՈՒԽ 13. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ, ՎԱՃԱՌՔԻ ՊԱՏՎԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ 16

ԳԼՈՒԽ 14. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ , ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ....18

ԳԼՈՒԽ 15. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ....19

ԳԼՈՒԽ 16. ԲԱՆԿԻ, ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵՈՒՄ....20

ԳԼՈՒԽ 17. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՆԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ....21

ԳԼՈՒԽ 18. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ....21

ԳԼՈՒԽ 19. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ....22

ԳԼՈՒԽ 20. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ....24

ԳԼՈՒԽ 21. ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ....26

ԳԼՈՒԽ 22. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ....33

ԳԼՈՒԽ 23. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ....34

ԳԼՈՒԽ 24. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ....35

ԳԼՈՒԽ 25. ՊԱՏՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ....36

ԳԼՈՒԽ 26. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ....38

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է

ԳԼՈՒԽ 1. ՆՊԱՏԱԿ

1. Սույն կարգի նպատակն է սահմանել բանկում արժեթղթերով գործառնությունների իրականացման գործընթացը, այդ գործառնություններին մասնակցող ստորաբաժանումների պարտականությունները, ինչպես նաև ներդրումային արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, օգտագործման և արժեթղթերի դասակարգման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

2. Սույն կարգում օգտագործվող սահմանումներն ու հապավումներն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) Բանկ՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ,
2) Հաճախորդ՝ Ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձ, որը որպես ներդրող դիմել է բանկ ներդրումային ծառայություններից օգտվելու համար և որի հետ կնքված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա, Բանկն իրականացնում է գործառնություններ արժեթղթերի շուկայում,
3) Արժեթուղթ՝ «Արժեթղթերի շուկային մասին» ՀՀ օրենքում կիրառվող նշանակության համաձայն սահմանված արժեթղթեր,
4) Ներդրումային ծառայություններ՝ Սույն կարգի իմաստով ներդրումային ծառայություններ են համարվում՝ հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը, իր հաշվին և իր անունից, ինչպես նաև իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը,
5) Ներդրումային ծառայությունների պայմանագիր՝ Բանկի և ներդրողի միջև կնքված փաստաթուղթ, որով կարգավորվում են տվյալ անձի արժեթղթերով գործարքների իրականացման, ծառայությունների դիմաց վճարման, հաշվետվությունների տրամադրման և դրանց հետ կապված կողմերի իրավահարաբերությունները,
6) Հաճախորդի միջոցներ - Հաճախորդի և բանկի միջև կնքված գրավոր պայմանագրի հիման վրա Բանկի տիրապետմանը և(կամ) կառավարմանը հանձնված հաճախորդին պատկանող դրամական միջոցները և(կամ) արժեթղթերը, այդ թվում՝ դրանց կառավարման արդյունքում առաջացած շահույթը,
7) Հայտ՝ արժեթղթեր ձեռք բերելու կամ վաճառելու հանձնարարական,
8) Հանձնարարական՝ Ներդրողի կողմից Բանկին տրվող և ներդրողի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով Բանկի կողմից գործարքի կնքման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ,
9) Պատվեր՝ Հանձնարարականում նշվող տեղեկությունների ամբողջություն, որը ներառում է հանձնարարականի հիման վրա արժեթղթերով գործարքի կնքման համար անհրաժեշտ գնային, ծավալային և ժամանակային պայմանները,
10) Կատարել ամբողջ պատվերը՝ ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որը ենթակա է կատարման բացառապես հանձնարարականում նշված քանակով արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանով,

11) Կատարել մասնակի պատվերը՝ Ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որը կարող է կատարվել մասնակիորեն՝ մնացորդը հանձնարարականների հերթում ընդգրկվելու պայմանով,
12) Հերթ՝ բոլոր ներդրողների կողմից Բանկին տրված, բայց բանկի կողմից դեռևս չկատարված հանձնարարականների հաջորդականություն,
13) Անմիջապես կատարել կամ հանել պատվերը՝ Ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որը ենթակա է անմիջապես կատարման՝ հանձնարարականում նշված գնով և լրիվ քանակով, հակառակ դեպքում հանձնարարականը չընդգրկել հանձնարարականների հերթում,
14) Պահել հերթում մինչև կատարումը՝ ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որով հանձնարարականը կարող է մնալ հերթում՝ մինչև հանձնարարականում նշված լրիվ քանակով արժեթղթերի գնումը կամ վաճառքը:
15) Շուկայական պատվեր՝ Ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որը ենթակա է կատարման՝ տվյալ պահին շուկայում գոյություն ունեցող գնով անմիջապես արժեթուղթ գնելու կամ վաճառելու պայմանով,
16) Գնման/վաճառքի լիմիտային պատվեր՝- ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որ ենթակա է կատարման՝ հանձնարարականում նշված գնից ոչ բարձր (վաճառքի դեպքում ոչ ցածր) գնով արժեթուղթ գնելու/վաճառելու պայմանով,
17) Գնման/վաճառքի ստոպ պատվեր՝- ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված արժեթղթերի առքի/վաճառքի պատվեր, որը ենթակա է կատարման, երբ հանձնարարականում նշված ստոպ գնից բարձր (վաճառքի դեպքում ցածր) գնով բորսայում կամ բորսայից դուրս գրանցվում են տվյալ արժեթղթով գործարքները,
18) Դեպո հաշիվ՝- արժեթղթերի հաշվառման համար նախատեսված հատուկ հաշիվ:
19) էլեկտրոնային կապի միջոցներ՝- «CBA Net», «SWIFT» համակարգեր և այլն,
20) էլեկտրոնային հաղորդագրություն՝- «CBA Net», «SWIFT» համակարգեր և այլն,
21) Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր՝ - Ներդրողի կողմից Բանկին տրվող հանձնարարականում նշված պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվեր մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվեր մեկ այլ գնով,
22) Բորսայական գործարք՝ - Ֆոնդային բորսայի կանոններով սահմանված կարգով ֆոնդային բորսայում կնքվող գործարք,
23) Արտաբորսայական գործարք՝- Ֆոնդային բորսայից դուրս կատարվող գործարք:
24) Արժեթղթերով ֆինանսավորման գործարք՝ արժեթղթերը փոխառությամբ տրամադրելու կամ ստանալու գործարքը, ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքը, կամ հետ վաճառքի իրավունքով գնման կամ հետգնման իրավունքով վաճառքի գործարքը,
25) Գործարքի կարգադրություն - պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող, գործարքի կնքումը հավաստող և գաճապետական գործառնությունների սպասարկման բաժնին ներկայացվող փաստաթուղթ,
26) ՆԱՊ կոմիտե - Ներդրումային (Ակտիվների և պարտավորությունների) կառավարման կոմիտե,

27) Բանկի հետ կապված անձինք՝ - «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ Բանկի ղեկավարները, Բանկի կապիտալում նշանակալից մասնակցություն ունեցող անձինք, վերջիններիս հետ փոխկապակցված (կամ) և համագործակցող անձինք և Բանկի հետ փոխկապակցված անձինք,
28) Ներդրումային գործառնություններ իրականացնող պատասխանատու ստորաբաժանում՝ Գանձապետարանի արժեթղթերով գործառնությունների բաժին
29) Շահագրգիռ անձ՝ Բանկում ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը, ներդրումային ծառայություններ մատուցող անձի կազմում կամ անունից ներդրումային ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնող աշխատակիցները,
30) Սույն կարգով սահմանված ընդհանուր գործընթացի պատասխանատու - Գանձապետարանի գանձապետ,
31) Հաճախորդների բանկային հաշիվների սպասարկում՝- հաճախորդների սպասարկման բաժնի աշխատակից,
32) Դեպո հաշիվներով գործարքի կատարում՝- գանձապետական գործառնությունների սպասարկման բաժնի համապատասխան աշխատակից, որը գործարքի կարգադրության հիման վրա իրականացնում է բանկի անունից կամ հաճախորդի հանձնարարականով կատարված գործարքների հաշվապահական հաշվառումը և վերջնահաշվարկը,
33) Դեպո հաշիվներով գործարքի հաստատում՝- գանձապետական գործառնությունների սպասարկման բաժնի ղեկավար,
34) Գանձապետական գործառնությունների սպասարկման բաժին՝ կառուցվածքային ստորաբաժանում, որը գործարքի կարգադրության հիման վրա իրականացնում է բանկի անունից կամ ներդողների հանձնարարականներով կատարված գործարքների հաշվապահական հաշվառումը և վերջնահաշվարկը,
35) Բաժնի պատասխանատու աշխատակից՝- Բանկի արժեթղթերով գործառնությունների բաժնի աշխատակից, ով ունի համապատասխան որակավորում և գիտելիքներ և լիազորված է իրականացնել բրոքերային գործունեություն,

ԳԼՈՒԽ 3. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3. Բանկում արժեթղթերով գործառնությունների իրականացման գործընթացը կարգավորվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգով, ՀՀ Կենտրոնական բանկի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ով և «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ

իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ով:

4. Բանկում ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերով գործառնությունները իրականացվում են պահպանելով ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված «ՀՀ Պետական (գանձապետական) կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման, հետգնման աճուրդի, հետգնման կազմակերպման և մարման սպասարկման», «ՀՀ պետական պարտատոմսերի պահառության գործունեության», «ՀՀ պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման», «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների համակարգում կիրառվող հաշվեհամարների կոդավորման», «ՀՀ պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում շրջանառության» և «Պետական պարտատոմսերով գործառնություններում կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների մասին» կարգերով:

5. Բանկի կողմից ներդրումային ծառայությունների վերաբերյալ Կենտրոնական Բանկ ներկայացվող հաշվետվությունների ժամկետները և ձևերը, ներդրումային ծառայություններ մատուցող անձանց նկատմամբ պահանջները, ինչպես նաև ներդրումային ծառայությունների մատուցման մասին Կենտրոնական Բանկին տեղեկացման մասին գործընթացը կարգավորվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական Բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ով, «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով և «Ներդրումային ընկերությունների գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ընկերությունների և օտարերկրյա ներդրումային ընկերությունների մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ունենալու համար նախնական համաձայնությունը ստանալու կարգը, նրանց կողմից ներկայացվող գործարար ծրագրի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, Բանկի կողմից ներդրումային ծառայությունների մատուցման մասին տեղեկացումը» կանոնակարգ 4/01-ով:

6. Ներդրումային ծառայությունների մատուցման ժամանակ հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների պաշտպանությունը, հաճախորդների դրամական միջոցների և արժեթղթերի պահպանման, տիրապետման ու օգտագործման գործընթացը կարգավորվում է Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հաճախորդների միջոցների պաշտպանության կանոնները» կանոնակարգ 4/12-ով:

7. Բանկում ներդրումային քաղաքականությունը, ներդրումային պորտֆելի (ներդրումային գործիքների առանձին խմբերի) նպատակային (բենչմարք) կառուցվածքը, եկամտաբերությունը և ժամկետայնությունը, ներդրումների բազմազանեցման (դիվերսիֆիկացիայի) սկզբունքները, ներդրումային սահմանափակումները (ըստ փոխառուների կամ ֆինանսական գործիքների վարկանիշների), Բանկի պարտավորությունների կառուցվածքին և բնույթին Բանկի ներդրումային գործունեության համապատասխանության ապահովման և առկա անհամապատասխանությունների արդյունքում առաջացող ռիսկերի կառավարման գործընթացը, ձեռք բերված արժեթղթերի թողարկողների և փոխառուների վարկունակության գնահատման սկզբունքները,պարբերականությունը, դրանց համար պատասխանատու անձանց պարտականությունները, մեկ թողարկողի գծով ռիսկի առավելագույն չափը, արժեթղթերի գծով ներդրումների բազմազանեցման ժամանակ ըստ առաջնահերթության նախապատվությունը,

ինչպես նաև Բանկի անունից ներդրումային գործարքներ կնքելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը և կնքվող գործարք(ներ)ի թույլատրելի առավելագույն սահմանաչափերը սահմանվում են Բանկի խորհրդի կողմից հաստատված «Ակտիվների և պարտավորությունների կառավարման» կանոնակարգով, «Ձեռնարկատիրական գործունեության վարկավորման» կարգով, ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգող ներքին իրավական ակտերով, «Ձեռնարկատիրական գործունեության վարկավորման» ընթացակարգով և սույն կարգով:

8. Բանկի հաշվին ձեռք բերվող արժեթղթերի ծավալների վերաբերյալ որոշումները կայացվում են Ն(ԱՊ) կոմիտեի կողմից ամսական կտրվածքով և ըստ անհրաժեշտության: Ն(ԱՊ) կոմիտեի կազմը, պարտականությունները, անցկացման հաճախականությունը և որոշումների ընդունման կարգը սահմանվում է Բանկի խորհրդի կողմից հաստատված «Կոմիտեների գործունեության» կարգով:

9. Բանկի կողմից հաճախորդի տվյալների նույնականացման ընթացակարգերը սահմանվում են Բանկի խորհրդի կողմից հաստատված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությամբ:

10. Արժեթղթերով գործառնությունների բաժինը օրական պարբերականությամբ ներկայացնում է ձեռք բերվող և մարվող արժեթղթերի ծավալները, Ներդրումային բիզնեսի գծով տնօրենին, Գանձապետարանի Գանձապետին:

11. Բանկային հաշիվների բացման գործընթացը կարգավորվում է Բանկի վարչության կողմից հաստատված «Ֆիզիկական անձանց բանկային հաշիվների բացման, սպասարկման և փակման» ընթացակարգով և «Կորպորատիվ հաճախորդների բանկային հաշիվների բացման և սպասարկման» ընթացակարգով:

12. Բանկի հաճախորդներին արժեթղթերով գործառնությունների իրականացումը ապահովելու համար Բանկի և հաճախորդի միջև կնքվում է Ներդրումային (բրոքերային) ծառայությունների մատուցման պայմանագիր, որը սահմանում է Բանկի կողմից հաճախորդներին ներդրումային ծառայությունների մատուցման կանոնները և պայմանները:

13. Բանկի Ներդրումային բիզնեսի գծով տնօրենը, որպես գլխավոր դիլեր պահպանելով սույն կարգի 7-րդ և 8-րդ. կետերով սահմանված պահանջները Բանկի ընթացիկ գործունեության ապահովման համար իր իրավասությունների շրջանակում որոշում է Բանկի հաշվին «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արժեթղթերի առքի, վաճառքի կամ փոխանակման կամ ռեպո գործարքների կնքման պայմանները (այդ թվում՝ գին, ծավալ, քանակ, տոկոսադրույք, կնքման, կատարման, մարման և այլ ժամկետներ և/կամ այլ պայմաններ):

14. Ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանման կողմից Բանկի վարչության հաստատմանն է ներկայացվում տեղեկատվական ամփոփագրեր, որոնցով սահմանվում են ներդրումային ծառայությունների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

1) ներդրումային ծառայության անվանումը, տեսակը, ինչպես նաև արժեթղթերով գործառնությունների իրականացման և ներդրումային ծառայությունների մատուցման սակագները,
2) մատուցվող ծառայություններից օգտվելու միջնորդավճարների, ծախսերի և այլ վճարների, այլ հնարավոր լրացուցիչ գանձումների չափի մասին: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա՝ ծառայություններից օգտվելու համար վճարվելիք գումարների հաշվարկման մասին: Եթե սույն ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով

կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխարժեքը և դրա հետ կապված ծախսերը: Գանձվող միջնորդավճարների մասին տեղեկատվությունը հաճախորդին ներկայացվում է նաև առանձին տողով,

3) հաճախորդի կողմից վճարումներ կատարելու պայմանների, եղանակների և ժամկետների մասին, ինչպես նաև սպառողների հետ կապի իրականացման գործընթացի և ժամկետների մասին (սպառողից պատվերներ և առանձնահատուկ ցուցումների ստանալու դեպքում),
4) պայմանագրերի ժամկետների մասին (ինչ ժամկետայնությամբ ներդրումային ծառայությունների պայմանագրեր կարող են կնքվել) և կնքված պայմանագրերի դադարեցման դեպքում հաճախորդների միջոցների վերադարձման մասին,
5) արժեթղթերի տեսակները, որոնցում կարող են ներդրվել հաճախորդների միջոցները, ինչպես նաև ընդհանուր տեղեկություններ այդ արժեթղթերի և նրանց հետ կապված ռիսկերի մասին,
6) հաճախորդից գործարքների իրականացման պատվերների (հավելված 2) ընդունման և կատարման գործընթացի մասին, ինչպես նաև գործարքների իրականացման վայրերի մասին, շահերի բախման կանխարգելմանն ուղղված քաղաքականության վերաբերյալ, մատուցվող ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
7) նշում այն մասին, թե ով է կրում տվյալ ծառայության սպառման ռիսկը: Ընդ որում, նշումը տրվում է աչքի ընկնող ձևով (օրինակ՝ իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման ծառայությունների մատուցման դեպքում կարող է նշվել. «ուշադրություն՝ պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ռիսկը կրում է հաճախորդը: Բանկը չի փոխհատուցում հաճախորդի վնասները, եթե դրանք չեն պատճառվել Բանկի կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում:»):

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

15. Բանկն արժեթղթերով գործառնություններն իրականացնում է առաջնային և երկրորդային շուկաներում, ընդ որում, գործարքները կարող են կնքվել ինչպես բորսայական, այնպես էլ արտաբորսայական եղանակով:

16. Արժեթղթերի առաջնային շուկայում գործակալների միջոցով տեղաբաշխման գործընթացին Բանկի մասնակցության կարգը.

1) Բանկը ներկայացնում է արժեթղթերի գնման հայտը (Հավելված 1):
2) Բանկի հաճախորդները մինչև արժեթղթերի գնման/վաճառքի պատվերը (Հավելված 2) բանկ ներկայացնելը պետք է Բանկի հետ կնքեն բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագիր (Հավելված 3):
3) Պայմանագրի կնքումից հետո առաջնային և երկրորդային շուկաներում Բանկի հաճախորդների համար ձեռք բերվող արժեթղթերի հաշվառման նպատակով հաճախորդի հետ կնքվում եմ Պահառության պայմանագիր՝ համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեության իրականացման»

կարգի և Բանկում բացվում է դեպո հաշիվ ու հաճախորդին տրվում է գրանցման ծածկագիր:

4) Աճուրդին մասնակցելու համար, արժեթղթերով գործառնությունների բաժնի պետը, համաձայնեցնելով Բանկի Ներդրումային բիզնեսի գծով տնօրենի/գանձապետի հետ, աճուրդի օրը մինչև սահմանված ժամը նախապատրաստում է աճուրդին ներկայացվող հայտերը, որոնց վրա պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից կատարվում է ստուգանշում:
5) Հայտը ստորագրվում է Բանկի վարչության նախագահի, Բանկի Ներդրումային բիզնեսի գծով տնօրենի կամ Գանձապետի կողմից, համաձայն ՆԱՊ կոմիտեով հաստատված իրենց տրված գործարքների իրականացման սահմանաչափերի:
6) Հայտը ստորագրվելուց հետո արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը, մինչև սահմանված ժամկետը, հայտը ուղարկում է արժեթղթերի առաջնային տեղաբաշխման գործակալին կամ ուղղակիորեն մասնակցում է աճուրդին:
7) Արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը ստանալով պաշտոնական դրական պատասխանը՝ Բանկի կողմից ներկայացված հայտը հանձնում է Գանձապետական գործառնությունների սպասարկման բաժին:
8) Գանձապետական գործառնությունների սպասարկման բաժնի համապատասխան աշխատակիցը, հիմք ընդունելով ստացված հաղորդագրությունը և Բանկի կողմից ներկայացված հայտը, նույն օրը կատարում է Բանկի կամ Բանկի հաճախորդների կողմից ձեռք բերված արժեթղթերի հաշվապահական ձևակերպումները:
9) Բանկի հաճախորդների կողմից ներկայացված պատվերների բավարարման դեպքում, արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը պատրաստում է հաճախորդի դեպո հաշիվների քաղվածքները, որոնք ստորագրվում և կնքվում են Բանկի Արժեթղթերով գործառնությունների բաժնի աշխատակցի կողմից և տրամադրվում են հաճախորդներին:

17. Բանկը արժեթղթերով գործառնություններ կարող է իրականացնել նաև «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ կողմից առաջարկվող պետական պարտատոմսերի և արտարժույթի շուկայի հատվածի համապատասխան հարթակում: Նշված հարթակում գործառնությունների կատարման գործընթացը իրականացվում է « Հայաստանի ֆոնդային Բորսայի» ԲԲԸ դիտորդ խորհրդի որոշմամբ հաստատված և ՀՀ Կենտրոնական բանկում գրանցված «Առևտրի ընդհանուր կանոններ », « Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ» և «Պետական պարտատոմսերի առևտրի կանոններ» ընթացակարգային պահանջներով:

ԳԼՈՒԽ 5. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

18. Բանկը երկրորդային շուկայում իրականացնում է գործարքներ իր անունից և իր հաշվին, ինչպես նաև իր անունից և Բանկի հաճախորդների հաշվին:

19. Բանկի անունից և հաշվին գործարքները իրականացվում է արժեթղթերով գործառնությունների բաժնին կողմից, որի ղեկավարը/գանձապետը գործարքի պայմանները

նախապես էլեկտրոնային հավաստումով համաձայնեցնում է համապատասխան իրավասություն ունեցող անձի հետ (Բանկի վարչության նախագահ/Բանկի Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն):

20. Արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը արժեթղթերի առք ու վաճառքի գործարքները հավաստում է հեռախոսով կամ էլեկտրոնային եղանակով:

21. Գործարքը հավաստելուց հետո կնքվում է արժեթղթերի առք ու վաճառքի պայմանագիր (Հավելված 4), որը ստորագրվում է համապատասխան իրավասություն ունեցող անձի (Բանկի վարչության նախագահ/Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն) կողմից: Երկկողմանի ստորագրված և կնքված պայմանագիրը տրամադրվում է Գաճապետական գործառնությունների սպասարկման բաժնին հաշվապահական ձևակերպումներ կատարելու համար:

Գաճապետական գործառնությունների սպասարկման բաժինը պարտավոր է գործարքի կատարման օրը կատարել համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

22. Բանկի կողմիցներդրողների հաշվին երկրորդային շուկայում գործարքները իրականացվում են ներդրողի հետ կնքված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն:

ԳԼՈՒԽ 6. ԴԵՊՈ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

23. Յուրաքանչյուր հաճախորդի համար, համաձայն Բանկի և հաճախորդի հետ կնքված Արժեթղթերի պահառության պայմանագրի, Բանկի հաճախորսների սպասարկման բաժնի կողմից բացվում է դեպո հաշիվ:

24. Դեպո հաշիվների վարման և սպասարկման գործընթացը կարգավորվում է Բանկի խորհրդի կողմից հաստատված «Արժեթղթերի պահառության գործունեության իրականացման» կարգով:

25. Յուրաքանչյուր հաճախորդ բանկում պետք է ունենա բանկային հաշիվներ, որոնց միջոցով և կկատարվեն պարտատոմսերի մարումները, զեղչատոկոսի վճարումը, արժեթղթերի առք ու վաճառքը, գրավադրումը և այլն:

ԳԼՈՒԽ 7. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

26. Բանկը ներդրումային գործունեության առումով Բանկի հաճախորդներին մատուցում է հետևյալ ներդրումային ծառայությունները.

1) հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
2) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում,
3) իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքների կատարում.
4) արժեթղթերի երաշխավորված կամ չերաշխավորված տեղաբաշխման իրականացում:

ԳԼՈՒԽ 8. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ

27. Բանկի կողմից ձեռք բերված արժեթղթերի տոկոսավճարները ստանալիս դրանք մուտքագրվում են Բանկի թղթակցային հաշիվներին և Բանկը ստանում է թղթակցային հաշվի ավելացման վերաբերյալ համապատասխան քաղվածքներ, որից հետո Գաճապետական գործառնությունների սպասարկման բաժինը տալիս է համապատասխան հաշվապահական ձևակերպումները, համաձայն Բանկի ներքին ակտերի պահանջների:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ և ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ

28. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը արժեթղթերով գործառնությունների բաժինը դասակարգում է հաճախորդներին՝ որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հաճախորդների, լրացնելով ներդրումային գիտելիքների և փորձի վերաբերյալ հարցաշարը (հավելված 6):

29. Բանկի կողմից մատուցվող ծառայություններից որևէ մեկի մասով կամ բոլոր ծառայությունների մասով՝ որպես պրոֆեսիոնալ հաճախորդներ կարող են դասակարգվել որակավորված ներդրողները, որոնք ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից ստացել են համապատասխան որակավորում:

30. Բանկի կողմից որպես պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել բացառապես որակավորված ներդրողները՝ իրենց համաձայնությունը տալու դեպքում:

31. Նախքան պրոֆեսիոնալ հաճախորդ դասակարգելը արժեթղթերով գործառնությունների բաժնի աշխատակիցը այդ հաճախորդին տեղեկացնում է այն մասին, որ Կենտրոնական Բանկի «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով սահմանված որոշակի պահանջներ չեն գործելու Բանկի և հաճախորդի փոխհարաբերություններում՝ ներկայացնելով այդ պահանջների էությունը:

32. Բանկի այն հաճախորդները, որոնք Բանկի կողմից մատուցվող ներդրումային ծառայություններից որևէ մեկի մասով կամ բոլոր ծառայությունների մասով տվել են իրենց համաձայնությունը որպես պրոֆեսիոնալ որակվելու համար, համապատասխան գրավոր հայտարարություն են տալիս Բանկին այն մասին, որ՝

1) համաձայն են որակվել որպես պրոֆեսիոնալ հաճախորդ,
2) տեղյակ են, որ որպես պրոֆեսիոնալ հաճախորդ որակվելու դեպքում հաճախորդների պաշտպանվածությանն ուղղված օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իրենց նկատմամբ և այդ պատճառով իրենք կորցնում են որոշակի պաշտպանվածություն:

33. Բանկի կողմից ոչ պրոֆեսիոնալ դասակարգված հաճախորդներին ներդրումային ծառայություններ մատուցվում են միայն Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ով և սույն կարգով սահմանված տեղեկատվությունը հաճախորդին ներկայացնելուց հետո:

34. Եթե Բանկը տեղեկանում է, որ հաճախորդը դադարել է որակավորված ներդրող լինելուց, ապա դադարեցնում է հաճախորդի հաշվառումը, որպես պրոֆեսիոնալ կարգավիճակ ունեցող հաճախորդի:

35. Արժեթղթերով գործառնությունների բաժնի կողմից վարվում է էլեկտրոնային գրանցամատյան, որտեղ հաշվառվում են ստորաբաժանման կողմից դասակարգված պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ հաճախորդները:

ԳԼՈՒԽ 10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

36. Նախքան ներդրումային ծառայությունների պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը հաճախորդին պետք է տրամադրի տեղեկատվություն՝

1) Բանկի հետ կապի միջոցները, տեղեկատվություն, թե ինչ լեզուներով հաճախորդը կարող է կապ հաստատել Բանկի հետ և ստանալ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն,
2) միմյանց հետ կապ հաստատելու և տեղեկատվություն փոխանակելու մեթոդները, ինչպես նաև պատվերների ընդունման և հաղորդման կարգը,
3) այն հիմքերը, որի համաձայն Բանկը իրավասու է մատուցել ներդրումային ծառայություններ, ինչպես նաև այդ անձին լիցենզավորած և(կամ) գրանցած իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները,
4) տեղեկատվություն հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին,
5) քայլերի համառոտ նկարագիրը, որը սահմանում է հաճախորդի միջոցների պաշտպանությունը պահովելու համար, ներառյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից ներդրողների փոխհատուցման, միջոցների երաշխավորման կամ նման այլ սխեմաներում մասնակցության մասին,
6) շահերի բախման սահմանափակման քաղաքականության համառոտ նկարագիրը (հաճախորդի պահանջի դեպքում՝ սույն կարգով սահմանված շահերի բախման քաղաքականության ամբողջ նկարագիրը),
7) արժեթղթերի մասին, ինչպես նաև գործարքի կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),
8) համապատասխան ծախսերի և միջնորդավճարների մասին:

37. Եթե Բանկը իր հաճախորդին տրամադրում է տեղեկություններ այնպիսի արժեթղթերի մասին, որն այդ պահին հրապարակային առաջարկի առարկա է և այդ նպատակով ազդագիր է հրապարակվել, ապա Բանկը պարտավոր է հաճախորդին տեղեկացնել, թե որտեղ է հրապարակված այդ ազդագիրը կամ որտեղից կարելի է այն ձեռք բերել:

38. Այն դեպքերում, եթե արժեթղթից բխող ռիսկերը երաշխավորված են երրորդ անձի կողմից, ներդրումային ծառայություններ մատուցող անձը հաճախորդին պետք է ներկայացնի տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորություն տվողի մասին:

39. Բանկը իր հաճախորդներին (ֆիզիկական անձանց, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) պետք է տեղեկացնի, որ արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

40. Սույն գլխի պահանջները կարող են չպահպանվել պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում:

ԳԼՈՒԽ 11. ՏԵՂԵԿԱՎՈՒԹՅՈՒՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

41. Արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը հաճախորդներին տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը ծախսերի և միջնորդավճարների վերաբերյալ.

1) ներդրումային ծառայություններից օգտվելու համար հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը ներկայացնում է վերջիններիս հաշվարկման սկզբունքները.
2) եթե սույն կետի 1)-ին ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխանակման փոխարժեքը և դրա հետ կապված ծախսերը.
3) վճարումներ կատարելու եղանակները:

42. Գանձվող միջնորդավճարների մասին տեղեկատվությունը արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակցի կողմից հաճախորդին ներկայացվում է նաև գրավոր:

43. Սույն կարգի 41-րդ կետի պահանջները կարող են չպահպանվել պրոֆեսիոնալ հաճախորդների դեպքում:

44. Մինչև ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելը, արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը հաճախորդին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող սույն կարգին և այլ իրավական ակտերին:

45. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրում սահմանվում են՝

1) կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկման և վճարման կարգը,
2) հաճախորդներին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
3) հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
4) պայմանագրով սահմանված պահանջների չպահպանման կամ չկատարման դեպքում կողմերի պատասխանատվությունը,

5) կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը, պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը, այդ թվում՝ հաճախորդի կողմից պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավունքը՝ Բանկին առնվազն 10 օր առաջ տեղեկացնելու պայմանով,
6) պայմանագրի դադարեցման դեպքում հաճախորդի դրամական միջոցների վերադարձման կարգը,
7) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր այլ տեղեկություններ:

46. Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելիս Բանկը հաճախորդների պատվերները կատարելիս ձեռնարկում է միջոցառումներ, որպեսզի դրանք կատարվեն անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Այդ միջոցառումները պետք է հնարավորություն տան հաճախորդի այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարել ըստ արժեթղթերով գործառնությունների բաժնի կողմից դրանց ստացման հաջորդականության:

47. Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքներ կատարելիս արժեթղթերով գործառնությունների բաժնի պետը պետք է՝

1) համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
2) այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:

48. Հաճախորդի կողմից պատվերները կարող են ներկայացվել գրավոր կամ ոչ գրավոր ձևով:

49. Գրավոր ձևով պատվերը ներկայացվում է հաճախորդի կողմից էլեկտրոնային փոստի, ինտերնետի, իսկ հաճախորդի ցանկության դեպքում՝ թղթային ձևով:

50. Ոչ գրավոր ձևով պատվերի ներկայացման դեպքում պատվեր ընդունող արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան իրավասություն ունեցող աշխատակիցը ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը ոչ գրավոր ձևով ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում և ստորագրում է գնման/վաճառքի պատվերի ներկայացման սահմանված ձևը՝ նշելով տեղեկատվության ստացման ժամանակը (ոչ թե իր կողմից պատվերի լրացման ժամկետը) որպեսի ճշտությամբ և իր անունը, ազգանունը: Այսպիսի դեպքերում պատվերում նշում է կատարվում այն մասին, որ հաճախորդի կողմից այն ներկայացվել է ոչ գրավոր ձևով:

51. Հաճախորդի կողմից պատվերը կարող է ներկայացվել ոչ գրավոր ձևով, եթե արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը համապատասխան տեխնիկական միջոցների օգնությամբ գրանցում է հաճախորդի կողմից պատվերի ներկայացման և դրա բովանդակությունը հավաստող փաստը (մասնավորապես՝ ձայնագրում է հեռախոսազրույցը)՝ ներառյալ ներկայացման ժամանակը՝ հաջորդաբար լրացնելով տարին, ամիսը, օրը, ժամը և որպես: Ընդ որում, այդ տեխնիկական միջոցները պետք է թույլ չտան գրանցված տեղեկատվությունը որևէ կերպ փոփոխել:

52. Հաճախորդի կողմից ներկայացվող պատվերներում ներառվող տեղեկությունների կազմը, ներկայացման կարգը և ժամկետները, ինչպես նաև պատվերի պայմանների փոփոխման կամ պատվերի հետ կանչման գործընթացը և ժամկետները սահմանվում են սույն կարգով և ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով: Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված պատվերը կամ դրանում ըստ պատվերի գնային, քանակական կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե պատվերով գործարքը դեռևս չի կնքվել: Այդ դեպքում հաճախորդի կողմից պատասխանատու ստորաբաժանում է ներկայացվում համապատասխան նոր պատվեր (հավելված 2) և հաճախորդի դիմում (հավելված 8):

53. Արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը իրավունք ունի հրաժարվել հաճախորդի պատվերը կատարելուց այն դեպքում, երբ պատվերի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայում տեղի ունեցող փոփոխությունների, գործարար շրջանառության սովորույթների և այլ բանկային կանոնների հետ չհապատասխանելու դեպքում: Պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում պատասխանատու աշխատակիցը այդ մասին անհապաղ տեղեկացնում է հաճախորդին՝ ուղարկելով համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում:

54. Հաճախորդը կարող է արժեթուղթ ձեռք բերելու նպատակով Բանկից ստանալ համապատասխան վարկ, ինչպես նաև իրականացնել կարճ վաճառք, եթե Բանկի հետ ունի համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:

ԳԼՈՒԽ 12. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

55. Արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը էլեկտրոնային գրանցամատյանում վարում է համապատասխան գրանցումներ հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասով:

56. Այդ գրանցումները պետք է կատարվեն պատվերների ստացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

57. Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասին էլեկտրոնային գրանցամատյանում գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները՝

1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդի նույնականացնող համարը,
2) հաճախորդի կողմից տրված պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
3) հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության պատվեր, օպցիոնի իրականացման պատվեր և այլն),
4) հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
5) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
6) արժեթղթերի քանակը, միավորի գինը և ընդհանուր ծավալը,
7) հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
8) հաճախորդի կողմից տրված պատվերի ստացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն,
9) պատվերը գրանցող շահագրգիռ անձի անունը, ազգանունը:

ԳԼՈՒԽ 13. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ, ՎԱՃԱՌՔԻ ՊԱՏՎԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

58. Հաճախորդը նախքան արժեթղթերի ձեռք բերման կամ վաճառքի պատվեր ներկայացնելը դիմում է արժեթղթերով գործառնությունների բաժին՝ պրոֆեսիոնալ հաճախորդ համարվելու համար:

59. Ներդրումային ծառայությունների մատուցման դեպքում արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը հաճախորդից պետք է պահանջի տեղեկատվություն միայն մատուցվող ներդրումային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ հաճախորդի գիտելիքների և փորձի մասին, որը հնարավորություն կտա աշխատակցին գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի պահանջներին: Այն դեպքում, եթե աշխատակիցը հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում հաճախորդի պահանջներին, ապա աշխատակիցը այդ մասին զգուշացնում է հաճախորդին: Սույն կարգով սահմանված գործողություններն իրականացնելիս աշխատակիցը որոշում է, թե արդյո՞ք հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Աշխատակիցը կարող է համարել, որ պրոֆեսիոնալ հաճախորդներն ունեն սույն կարգով սահմանված անհրաժեշտ գիտելիքները և փորձը:

60. Հաճախորդը կարող է ներկայացնել՝

1) գնման/վաճառքի լիմիտային պատվեր,
2) շուկայական պատվեր,
3) գնման/վաճառքի ստոպ պատվեր,
4) գնման/ վաճառքի ստոպ լիմիտային պատվեր:

61. Արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակից իր մոտ վարվող համապատասխան էլեկտրոնային գրանցամատյանում գրանցում է պատվերի ստացման օրը, ժամը, որպեն և պատվերում նշված արժեթղթերի առքի/վաճառքի պայմանները:

62. Հաճախորդները կարող են պատվեր տալ նաև հեռախոսակապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով պահպանելով սույն կարգով սահմանված պահանջները:

63. Ընդունված պատվեր(ներ)ի հիման վրա արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը իրականացնում է պատվերները՝ պահպանելով սույն կարգով սահմանված պահանջները: Պատվերների կատարումը հաստատվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից:

64. Պատվերների կատարման կամ չկատարման վերաբերյալ արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահում հաճախորդին և վերջինիս տրամադրում է քաղվածք հաշիվների վերաբերյալ (հավելված 9):

65. Կատարված գործարքների գրանցում

1) Սույն կարգի 26)-րդ կետի 1)-ին ենթակետով նշված ներդրումային ծառայությունը իրականացնելուց հետո արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցն ընդունված և հաղորդված պատվերների կատարման մասին հաստատումը ստանալուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, պետք է կատարի գրանցումներ կատարված գործարքի մասին.
2) Սույն կարգի 26)-րդ կետի 2)-րդ ենթակետով նշված ներդրումային ծառայությունը իրականացնելուց հետո արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը հաճախորդի պատվերը կատարելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը, պետք է էլեկտրոնային գրանցամատյանում կատարի գրանցումներ կատարված գործարքի մասին:
3) Սույն կարգի 65)-րդ կետի 1)-ին և 2)-րդ ենթակետերի համաձայն էլեկտրոնային գրանցամատյանում կատարվող գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները.
   ա. հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
   բ. գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը և օրը,
   գ. գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն և գործարքի տեսակը (առք, վաճառք),
   դ. գործարքի բնույթը, եթե գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
   ե. արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի և արժեթղթի անվանումը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
   զ. արժեթղթերի քանակը, միավորի գինը, ընդհանուր ծավալը և գործարքի մյուս կողմը,
   է. գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),
   ը. գործարքը կատարող շահագրգիռ անձի անունը, ազգանունը (իսկ սույն կարգի 26) կետի 1) ենթակետով սահմանված դեպքում՝ գործարքի կատարման համար արժեթղթերով գործառնություններով բաժնի ղեկավարի շահագրգիռ անձի անունը, ազգանունը):

66. Եթե արժեթղթերով գործառնություններով բաժնի աշխատակիցը հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման պատվերներ է ընդունում և հաղորդում, ապա այդ անձը պատվերի հաղորդումից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը պետք է էլեկտրոնային գրանցամատյանում կատարի գրանցումներ ընդունված և հաղորդված պատվերների մասին: Այդ գրանցումները ներառում են հետևյալ տեղեկությունները՝
1) հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
2) այն անձի անվանումը կամ նույնականացնող համարը, ում հաղորդվել է պատվերը,
3) հաղորդված պատվերի պայմանները՝ համաձայն սույն կարգի 57-րդ կետի 2-7-րդ ենթակետերում նշված տեղեկատվության,
4) պատվերի հաղորդման ամսաթիվը և ճշգրիտ ժամը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն:

ԳԼՈՒԽ 14. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ , ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԴԵՊՔԵՐԸ

67. Ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում առաջացող շահերի բախման հնարավոր դեպքերը են՝

1) հաճախորդին շուկայականից ավելի բարձր գնով արժեթղթերի վաճառք Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված, ինչպես նաև այլ անձանց սեփական պորտֆելից՝ առանց հաշվի առնելու հաճախորդի ներդրումային նպատակները և հաճախորդի կողմից Բանկին ներկայացված պատվերում նշված էական պայմանները,
2) հաճախորդին պատկանող արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գնով Բանկին, Բանկի աշխատակիցներին և/կամ Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված, ինչպես նաև այլ անձանց,
3) հաճախորդի միջոցների ներդրում Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված, ինչպես նաև այլ անձանց պատկանող արժեթղթերում,
4) հաճախորդին պատկանող արժեթղթերով Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող այլ գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով կամ խախտելով հաճախորդի ներդրումային նպատակները,
5) մեծ ծավալներով կամ հաճախորդի շահերին չհամապատասխանող գործարքների կնքում, որը նպատակ է հետապնդում ավելի մեծ ծավալներով միջնորդավճարների և այլ վճարների գանձում հաճախորդից,
6) հաճախորդի միջոցների օգտագործում այլ նպատակներով,
7) բանկում համապատասխան հաշիվներում հաշվառվող և ներդրումներ իրականացնելու համար նախատեսված հաճախորդի միջոցների կանխամտածված օգտագործումը՝ Բանկի ակտիվային գործառնությունների իրականացման նպատակով,
8) էական նշանակություն ունեցող և արժեթղթերի շուկայի գնագոյացման վրա ազդելու հնարավորություն ունեցող՝ հաճախորդի կողմից ստացված ծառայողական տեղեկատվության օգտագործում ի շահ Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված անձանց, ինչպես նաև նրանց հետ փոխկապակցված անձանց:

68. Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացը կարող է ուղեկցվել շահերի բախման նաև այլ դեպքերով:

69. Հաճախորդների շահերի պաշտպանությանն ուղղված պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցների պարտականությունները են.

1) արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելիս գործել անկողմնակալության, ճշտապահության և հաճախորդների արժեթղթերով և դրամական միջոցներով իրականացված բոլոր գործարքների վերաբերյալ վերջիններիս պարտադիր տեղեկացման սկզբունքներով:

2) Հաճախորդների պատվերները կատարելիս Բանկը գործում է ելնելով հաճախորդի շահերի պաշտպանությունից: Վերոնշյալ շահերի պաշտպանման նպատակով արժեթղթերով գործառնություններ իրականացնող համապատասխան աշխատակիցները պարտավոր են՝

ա. չիրականացնել հաճախորդի շահերին հակասող գործարքներ, որոնց վերջնական նպատակն է Բանկի կողմից տվյալ հաճախորդից գանձվող միջնորդավճարների և այլ վճարների ծավալների մեծացումը,
բ. հաճախորդի շահերը համարել գերակա Բանկի շահերի նկատմամբ՝ հաճախորդի պատվերի համաձայն գործարքներ կնքելիս շահերի բախման հնարավոր դեպքերի ի հայտ գալու ժամանակ,
գ. հաճախորդների պատվերների համաձայն իրականացվող գործարքներն իրականացնել մասնագիտական բարձր մակարդակով և հնարավոր լավագույն պայմաններով,
դ. կնքել գործարքներ բացառապես հաճախորդների հետ կնքված Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով և այդ ծառայությունների մատուցումը կանոնակարգող կանոններով սահմանված կարգով,
ե. գանձել միջնորդավճարներ, համաձայն բանկում գործող սակագների:

70. Շահերի բախման սահմանափակման համառոտ նկարագիրը ներկայացված է սույն գլխում, իսկ սահմանված գործընթացների պահպանման համար պատասխանատվություն է կրում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը:

ԳԼՈՒԽ 15. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

71. Ներդրումային գործունեության իրականացման ընթացքում Բանկի, Բանկի աշխատակիցների և/կամ Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված, ինչպես նաև այլ անձանց և հաճախորդների միջև հնարավոր շահերի բախման բացառման նպատակով բանկում իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

1) Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված, ինչպես նաև այլ անձանց և հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են ՀՀ օրենսդրության և բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
2) Բանկն իրավասու է չկատարել հաճախորդի պատվերը (վերջինիս հնարավորինս արագ տեղեկացնելու պայմանով), եթե պատվերի կատարումը հակասում է ՀՀ օրենսդրության պահանջներին,
3) պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներին արգելվում է կատարել Բանկի սեփական գործարքները, նույն էական պայմաններով ներկայացված Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված, ինչպես նաև այլ անձանց կամ հաճախորդի պատվերը մեկ այլ հաճախորդի պատվերից շուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ գործարքի կատարումը բխում է հաճախորդի շահերից և այն չի խոչընդոտում վերջինիս պատվերի կատարմանը,

4) պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցները պարտավոր են անվերապահորեն հետևել ծառայողական տեղեկատվության պահպանման և ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակմանը՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին,
5) գործարքի կնքման նպատակով բանկ ներկայացված պատվերների առանձնացված ընդունումը և ըստ ստացված պատվերի համապատասխան գործարքն իրականացնող ստորաբաժանման գործառույթները սահմանվում են խորհրդի կողմից հաստատված գանձապետարանի կանոնադրությամբ և սույն կարգով:

72. Բանկի և հաճախորդների միջև հնարավոր շահերի բախման կանխարգելման նպատակով Բանկը պահպանում է ՀՀ օրենսդրությամբ, Կենտրոնական Բանկի ներքին իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջները:

1) Բանկը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պարտավոր է ներկայացնել հաշվետվություններ հաճախորդներին վերջիններիս արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով իրականացված գործարքների վերաբերյալ:
2) Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում ներառվող տեղեկատվության կազմը սահմանվում է սույն կարգով և բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրով:

ԳԼՈՒԽ 16. ԲԱՆԿԻ, ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ, ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵՈՒՄ

73. Բանկի, Բանկի ղեկավարների, նրանց հետ փոխկապակցված անձանց և աշխատակիցների միջև շահերի բախումների հնարավոր դեպքերն են.

1) պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից Բանկի հաշվին և Բանկի անունից շուկայականից ավելի բարձր գներով արժեթղթերի ձեռք բերում,
2) պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի կողմից Բանկի հաշվին և Բանկի անունից ձեռք բերած արժեթղթերի վաճառք շուկայականից ավելի ցածր գներով,
3) Բանկի միջոցների ներդրում Բանկի հետ կապված անձանց կամ Բանկի աշխատակիցների հետ փոխկապակցված անձանց արժեթղթերում,
4) Բանկին պատկանող արժեթղթերով Բանկի հետ կապված անձանց կամ Բանկի աշխատակիցների հետ կապված ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով,
5) Բանկի ղեկավարի կողմից աշխատակցի վրա ճնշման գործադրում, որի արդյունքում ձեռք են բերվում (վաճառվում) Բանկի ղեկավարի հետ փոխկապակցված անձանց կամ այլ անձանց արժեթղթեր, ինչը չի բխում Բանկի շահերից,
6) ղեկավարի հանձնարարությամբ մեծ ծավալներով կամ բարձր ռիսկ պարունակող արժեթղթերի ձեռք բերում (վաճառք),
7) Հաճախորդի միջոցներով Բանկի ղեկավարների կամ աշխատակիցների հետ կապված, փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց օգտին իրականացվող գործարքներ շուկայական գներին չհամապատասխանող գներով:

ԳԼՈՒԽ 17. ԾԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱՌՄԱՆ ՆԱՏԱԿՈՎ ԲԱՆԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

74. Ներդրումային ծառայություններ մատուցելիս պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցները պարտավոր են՝

1) պահպանել տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի պահանջները,
2) վեր դասել Բանկի և Բանկի հաճախորդների շահերը սեփականից և խուսափել այնպիսի գործարքների կնքումից, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ հաճախորդի և/կամ Բանկի շահերի վրա,
3) ապահովել ներդրողների (հաճախորդների, գործընկերների և շուկայի այլ մասնակիցների) շահերի պաշտպանությունը,
4) իրենց իրավասությունների շրջանակներում տեղեկացնել անմիջական ղեկավարին ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերի հնարավոր խախտումների, ինչպես նաև այն գործառնությունների մասին, որոնց առնչությամբ բանկը ՀՀ օրենսդրության համաձայն կարող է դիտվել որպես շահագրգիռ անձ:

75. Բանկի, Բանկի ղեկավարների, փոխկապակցված անձանց և աշխատակիցների միջև շահերի բախումների հնարավոր դեպքերը բացառելու նպատակով իրականացվում են հետևյալ միջոցառումները.

1) Բանկի աշխատակիցների, Բանկի հետ կապված, նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և հաճախորդների պատվերների հիման վրա գործարքները կնքվում են ՀՀ օրենսդրության և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով,
2) Բանկի աշխատակիցներին և ղեկավարներին արգելվում է կնքել կամ հանձնարարել կնքել այնպիսի գործարքներ, որոնք հակասում են Բանկի շահերին,
3) արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը արժեթղթերով գործառնությունների հետ կապված գործարքների կնքումից առաջ ստանում է սույն կարգով և գանձապետարանի կանոնադրությամբ սահմանված Բանկի համապատասխան ղեկավար(ներ)ի էլեկտրոնային հավաստումով համաձայնությունը:

76. Բանկի անունից ներդրումային գործարքներ կնքելու իրավասություն ունեցող կառավարման իրավասու մարմնի և անձանց համար կնքվող գործարք(ներ)ի թույլատրելի առավելագույն սահմանաչափերը սահմանվում են Բանկի խորհրդի կողմից հաստատված «Ակտիվների և պարտավորությունների կառավարման» կանոնակարգով:

ԳԼՈՒԽ 18. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

77. Եթե Բանկը կատարել է հաճախորդի պատվերը, ապա անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը տեղեկատվության փոխանցման նախապես պայմանավորված միջոցով արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը հաճախորդին է տրամադրում պատվերի կատարման մասին հաշվետվություն (հավելված 7):

78. Հաճախորդի պատվերի կատարման մասին հաշվետվությունը ներառում է՝

1) Բանկի անվանումը,
2) հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
3) գործարքի կնքման ամսաթիվը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը,
4) գործարքի կնքման ժամը՝ հաջորդաբար նշելով ժամը և րոպեն,
5) հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
6) գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),
7) արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ ուղարկողի անվանումը և արժեթղթի տեսակը),
8) պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք),
9) արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),
10) միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),
11) ընդհանուր ծավալը,
12) գանձված միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),
13) հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),
14) տեղեկատվություն այն փաստի մասին, որ հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար:

79. Եթե հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակիցը հաճախորդին է ներկայացնում պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

ԳԼՈՒԽ 19. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

80. Բանկը, նրա ղեկավարը կամ պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցները պարտավոր են մերժել ծառայողական տեղեկության տրամադրման ցանկացած միջնորդություն կամ պահանջ, եթե այն չի ներկայացվել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Ծառայողական տեղեկատվություն է համարվում հաճախորդին սպասարկելու կապակցությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձին (այդ թվում նաև՝ Կենտրոնական դեպոզիտարիային) հաճախորդի հայտնի դարձած հաշիվների վերաբերյալ որևէ տեղեկությունը, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունը, ինչպես նաև հաճախորդի առևտրային կամ ծառայողական գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի կամ օգտակար մոդելի մասին տեղեկությունը և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և

ներդրումային ծառայություններ մատուցող անձը տեղյակ է եղել կամ պետք է տեղյակ լիներ այդ մտադրության մասին:

81. Ծառայողական տեղեկության հրապարակում է համարվում այդ տեղեկությունը (կամ դրա ցանկացած կրիչը) բանավոր կամ գրավոր ձևով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ հրապարակելը, երրորդ անձին հայտնի դարձնելը կամ տարածելը, երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը (թույլատրելը, չխոչընդոտելը կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

82. Տեղեկատվության պատշաճ պահպանման համար Բանկի ղեկավարներին, ներդրումային ծառայություններ մատուցող աշխատակիցներին, նախկինում ղեկավար կամ ներդրումային ծառայություններ մատուցող աշխատակից հանդիսացող անձանց, ինչպես նաև այն անձանց ու կազմակերպություններին, որոնք Բանկին ծառայություններ (աշխատանքներ) են մատուցում կամ մատուցել են նախկինում, արգելվում է ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ իրենց վստահված կամ հայտնի դարձած ծառայողական տեղեկություն հրապարակելը, ինչպես նաև իրենց անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով՝ դրանք օգտագործելը, երրորդ անձանց կողմից այդպիսի օգտագործման հնարավորություն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընձեռելը (թույլատրել, չխոչընդոտել կամ այդ տեղեկության պահպանման կարգի խախտման հետևանքով դրա հրապարակումը հնարավոր դարձնելը):

83. Բանկը պարտավոր է ապահովել հաճախորդի վերաբերյալ տեղեկությունների պահպանումը:

84. Բանկում վարվող արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն հաճախորդին, նրա լիազորված ներկայացուցչին և պետական լիազոր մարմնին (ՀՀ օրենսդրությամբ նրանց լիազորությունների շրջանակում), ինչպես նաև թողարկողին և նրա լիազորված ներկայացուցչին և «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ անձանց՝ հաճախորդին պատկանող արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար:

85. Բանկի կողմից հաճախորդի արժեթղթերի հաշվի մասին գաղտնիք ներկայացնող տեղեկությունների բացահայտման դեպքում (բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի) հաճախորդն իրավունք ունի Բանկից պահանջել խախտված իրավունքի վերականգման նպատակով վնասի փոխհատուցում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

86. Ծառայողական տեղեկության հրապարակում չի համարվում և Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով չի արգելվում՝

1) Բանկին իրավաբանական, հաշվապահական, այլ խորհրդատվական կամ ներկայացուցչական ծառայություններ մատուցող կամ նրա համար որոշակի աշխատանքներ կատարող անձանց և կազմակերպություններին տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձի կողմից ծառայողական տեղեկություն հայտնելը կամ տրամադրելը, եթե դա անհրաժեշտ է այդ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար, և եթե այդ անձինք և կազմակերպությունները գրավոր պարտավորություն են տվել պահպանել տեղեկությունը և ձեռնպահ մնալ այն հրապարակելուց.
2) Բանկի հաճախորդի կողմից կամ վերջինիս գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ միայն իրեն վերաբերող տեղեկությունների հրապարակումը.

3) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան ծառայողական տեղեկությունների տրամադրումը.
4) օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում թողարկողին կամ սույն օրենքով սահմանված կարգով արժեթղթերը հանձնելու առաջարկով հանդես եկող անձին անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում ներառված տեղեկությունների տրամադրումը.
5) միայն ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերով նախատեսված կարգով ընդունված դատարանի որոշման հիման վրա հարկային մարմիններին Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի հետ կատարված գործարքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը.
6) ներդրումային ֆոնդի կառավարման կամ դրա ակտիվների պահառության ընթացքում ներդրումային ֆոնդի կամ դրա մասնակցի և նրան պատկանող ֆոնդի թողարկած արժեթղթերի վերաբերյալ հայտնի դարձած տեղեկությունների փոխանակումը տվյալ ներդրումային ֆոնդի, կառավարչի և պահառուի միջև, բացառությամբ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերի.
7) օրենքով սահմանված դեպքերում աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի իրականացման ընթացքում ստացած տեղեկությունների կամ փաստաթղթերի տրամադրումը Կենտրոնական Բանկին:

87. Բանկը քաղաքացիական գործերով պահանջվող ծառայողական տեղեկությունները տրամադրում է միայն դատարանի կողմից՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ընդունված որոշման հիման վրա, որի մեջ պետք է նշվեն նաև անձը և նրան վերաբերող այն տեղեկությունները, որոնք ենթակա են տրամադրման:

88. Քրեական գործերով ծառայողական տեղեկությունների տրամադրումը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով:

89. Արգելվում է սույն կարգի 87-րդ կետով սահմանված որոշման հիման վրա այդ որոշման մեջ չնշված այլ անձանց վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրումը:

90. Բանկի կողմից ծառայողական տեղեկությունների տրամադրումը հաճախորդի ժառանգներին (իրավահաջորդներին) իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

91. Ծառայողական տեղեկությունները բանկում պահպանվում են էլեկտրոնային և թղթային տեսքով.
1) էլեկտրոնային տեսքով տեղեկությունները հավաքագրվում են համապատասխան աշխատակցի կողմից և կիսամյակը մեկ արխիվացվում են Բանկի համապատասխան համակարգչային սերվերում:
2) Թղթային տեսքով հավաքագրված տեղեկությունները համապատասխան աշխատակցի կողմից հանձնվում են Բանկի արխիվ:

ԳԼՈՒԽ 20. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

92. Ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ Կենտրոնական Բանկի հետ:

1) Կենտրոնական Բանկի հետ ռեպո և հակադարձ ռեպո գործարքները իրականացվում են համաձայն Բանկի և Կենտրոնական Բանկի միջև կնքված գլխավոր համաձայնագրի շրջանակներում:
2) Կենտրոնական Բանկի հետ ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքները իրականացվում են Կենտրոնական բանկի կողմից նախօրոք հայտարարված պայմաններով:
3) Գործելով Կենտրոնական Բանկի և ՀՀ տարածքում գործող Բանկերի հետ կնքված գլխավոր համաձայնագրի/պայմանագրի համաձայն, Բանկը Կենտրոնական Բանկի հետ գործարքներ է իրականացնում Կենտրոնական Բանկի կողմից սահմանված հայտերի միջոցով:
4) Կենտրոնական Բանկի հետ ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ իրականացնելու համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը նախապես համաձայնեցնելով գործարքի ծավալը Բանկի համապատասխան իրավասություն ունեցող անձի (վարչության նախագահի/Ներդրումային բիզնեսի գծով տնօրենի) հետ, գործարքի օրը էլեկտրոնային եղանակով համապատասխան հասցեի միջոցով հայտը ուղարկում է Կենտրոնական բանկ:
5) Գաճապետական գործառնությունների սպասարկման բաժնի համապատասխան աշխատակիցը, հիմք ընդունելով Կենտրոնական Բանկից ստացված հաղորդագրությունը և Բանկի կողմից ներկայացված հայտը, նույն օրը կատարում է համապատասխան հաշվապահական ձևակերպումները:

93. Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների իրականացումը միջբանկային շուկայում.

1) Ռեպո և հակադարձ ռեպո գործարքները միջբանկային շուկայում իրականացվում են ՀՀ տարածքում գործող բանկերի հետ կնքված պայմանագրի համաձայն:
2) Բանկի անունից գործարքները իրականացվում են արժեթղթերով գործառնությունների բաժնի համապատասխան աշխատակցի կողմից, նախապես համաձայնեցնելով պատասխանատու ստորաբաժանման/բաժնի ղեկավարի հետ, որը իր հերթին ստանում է հավաստում Բանկի վարչության նախագահից, Ներդրումային բիզնեսի գծով տնօրենից կամ Գանձապետից:
3) Բաժնի համապատասխան աշխատակիցը, ունենելով Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կատարման վավերապայմանները համաձայնեցնում է սույն կարգի 93 կետի 2-րդ ենթակետով սահմանված կարգով:
4) Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների կատարման վավերապայմենները Բանկի վարչության նախագահի, Ներդրումային բիզնեսի գծով տնօրենի կամ Գանձապետի կողմից վավերացումից հետո ուղարկվում է Գաճապետական գործառնությունների սպասարկման բաժին:
5) Գաճապետական գործառնությունների սպասարկման բաժինը պարտավոր է գործարքի կատարման օրը կատարել համապատասխան հաշվապահական ձևակերպումները:
6) Գործարքի հետ գնման օրը, կողմերը պարտավոր են վերադարձնել իրար արժեթղթերը և գումարը հաշվարկված տոկոսագումարով:

7) Բանկը ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ կարող իրականացնել նաև Ֆոնդային բորսայի կողմից առաջարկվող Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների համար նախատեսված ֆինանսական հարթակում:
8) Նշված հարթակում գործառնությունների կատարման ընթացակարգը սահմանված է Ֆոնդային բորսայի կողմից առաջարկված և ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Առևտրի ընդհանուր կանոններ»-ով:

94. Ռեպո և հակադարձ ռեպո գործարքների իրականացումը Բանկի հաճախորդների հետ: Հաճախորդի հետ ռեպո և հակադարձ ռեպո գործարքներ կնքելու համար, նրանց հետ պետք է կնքվի համապատասխան պայմանագիր (Հավելված 5), որով կարգավորվում է հաճախորդի և Բանկի հարաբերությունները՝ իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև պարտավորությունների ժամանակին չկատարման կամ ոչ լրիվ կերպով կատարման դեպքում՝ կողմերի պատասխանատվությունները:

ԳԼՈՒԽ 21. ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

95. Սույն կարգի շրջանակներում՝ Բանկի կողմից ձեռքբերված ինվեստիցիոն արժեթղթեր են համարվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝
1) բաժնետոմսերը,
2) ոչ պետական պարտատոմսերը,
3) ներդրումներն այլ անձանց կանոնադրական հիմնադրամներում (հետագայում՝ արժեթղթեր):

96. Ինվեստիցիոն արժեթղթերն ըստ առանձին հատկանիշների ստորաբաժանվում են հետևյալ խմբերի և ենթախմբերի՝
1) Ըստ ժամկետայնության՝

ա. ժամկետային արժեթղթեր՝ մարման ամրագրված ժամկետներ ունեցող արժեթղթերը,
բ. անժամկետ արժեթղթեր՝ մարման ամրագրված ժամկետներ չունեցող արժեթղթերը:
2) Ըստ նպատակայնության՝

ա. վերավաճառքի նպատակով ձեռք բերված արժեթղթեր՝ ժամկետային և անժամկետ այն բոլոր արժեթղթերը, որոնք ձեռք են բերվել վերավաճառքի նպատակով և արագ կարող են վերածվել բարձր իրացվելի ակտիվների,
բ. վաճառքի համար նախատեսվող արժեթղթեր՝ այն բոլոր արժեթղթերը, որոնք ձեռք բերողը մտադիր չէ վաճառել մոտակա (կարճատև) ժամանակահատվածում, սակայն դրանք կարող են վաճառվել և սովորաբար չեն պահվում մինչև մարման ժամկետի ավարտը (ժամկետային արժեթղթեր) կամ պահվում են մեկ տարուց պակաս ժամկետով (անժամկետ արժեթղթեր):
գ. մինչև մարման ժամկետի ավարտը պահվող արժեթղթեր և անժամկետ արժեթղթեր՝ այն ժամկետային արժեթղթերը, որոնք ձեռք բերողը մտադիր է պահել

մինչև մարման ժամկետի ավարտը, ինչպես նաև այն անժամկետ արժեթղթերը, որոնք պահվում են երկարատև ժամանակահատվածում (լրացուցիչ շահույթ ստանալու, արժեթուղթ թողարկողի վրա ներազդելու և/կամ նրան վերահսկելու նպատակով):

3) Ըստ գնահատման եղանակի (միայն բաժնետոմսերի համար)՝

ա. գնանշվող բաժնետոմսեր՝ ՀՀ տարածքում գործող ֆոնդային բորսաներում, ֆոնդային ստորաբաժանում ունեցող այլ բորսաներում, ինչպես նաև արժեթղթերի շուկայի կարգավորում և վերահսկողություն իրականացնող պետական լիազորված մարմնի կողմից սահմանված ցանկում ընդգրկված օտարերկրյա ֆոնդային բորսաներում և բորսայական գործառնություններ իրականացնող այլ հաստատություններում (համակարգերում) պարբերաբար գնանշվող բաժնետոմսերը: Գնանշվող բաժնետոմսերը պետք է բավարարեն հետևյալ չափանիշներին միաժամանակ՝

I. բաժնետոմսերի լիստինգի մեջ ներառումը ոչ պակաս, քան մեկ ֆոնդային բորսայում, ֆոնդային ստորաբաժանում ունեցող այլ բորսայում կամ բորսայական գործառնություններ իրականացնող հաստատությունում (համակարգում),

II. նախորդ եռամսյակի տվյալներով բորսայում տվյալ բաժնետոմսի միջին ամսական նվազագույն շրջանառությունը կազմում է մեկ միլիոն դրամ,

III. բաժնետոմսերի գնանշման հրապարակումը

բ. չգնանշվող բաժնետոմսեր՝ սույն կետի ա) ենթակետի չափանիշներից որևէ մեկին չբավարարող բաժնետոմսերը:

4) Հնարավոր կորուստների պահուստ ձևավորվում է սույն կարգի 95-րդ կետում նշված և 96-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» ենթակետի պահանջները բավարարող ժամկետային և անժամկետ արժեթղթերի գծով:

5) Հնարավոր կորուստների պահուստ չի ձևավորվում 96-րդ կետի 2-րդ ենթակետում նշված վերավաճառքի նպատակով ձեռք բերված կամ վաճառքի համար նախատեսվող ինչպես ժամկետային, այնպես էլ անժամկետ արժեթղթերի գծով:

6) Հնարավոր կորուստների պահուստ չի ձևավորվում նաև 96-րդ կետի 4-րդ ենթակետում նշված ժամկետային ու անժամկետ արժեթղթերի գծով ստացվելիք գումարների (զեղչատոկոս, հավելավճար, շահաբաժիններ) համար: Բանկի եկամուտներին հաշվեգրված այդ գումարների դուրս գրումը կատարվում է սույն կարգի 100 կետի 3-րդ ենթակետի համապատասխան:

97. Ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորումը:

1) Բանկի կողմից ձեռք բերված սույն կարգի 96-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» ենթակետում նշված ժամկետային արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները կատարվում են աղյուսակում նշված տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն սահմաններում, որը բանկը կատարում է ինքնուրույն՝ ելնելով դրանց մարման ժամկետի ավարտից հետո ժամկետանց օրերի թվից և թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումից: ՀՀ կենտրոնական բանկը, Բանկի արժեթղթերի վերստուգման արդյունքների հիման վրա կարող է բանկին պարտավորեցնել պահուստին ուղղվող մասհանումները կատարել ընդհուպ մինչև

գործակցի առավելագույն չափով, ինչպես նաև ճշտել արժեթղթի ռիսկայնությունը՝ ելնելով սույն ենթակետի պահանջներից:

Ժամկետային արժեթղթերի դասը	Արժեթղթերի դասակարգումն ըստ դրանց մարման ժամկետը լրանալուց հետո ժամկետանց օրերի	Պահուստին կատարվող մասհանումների սահմանաչափերը, (%)
1. Ոչ ռիսկային	Արժեթղթի ձեռքբերման պահին	2
2. Ռիսկային	Արժեթղթի մարման ժամկետը լրանալու պահից մինչև 60-րդ օրը ներառյալ	2-20
3. Միջին ռիսկային	Արժեթղթի մարման օրվան հաջորդող 61-րդ օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ	20-70
4. Բարձր ռիսկային	Արժեթղթի մարման օրվան հաջորդող 91-րդ օրվանից մինչև 180-րդ օրը ներառյալ	70-100
5. Անհուսալի	Արժեթղթի մարման օրվան հաջորդող 181-րդ օրվանից	100

2) Ժամկետային աժեթղթերի հնարավոր կորուստների պահուստի ավելցուկային մնացորդների առկայության դեպքում այդ մնացորդները ուղղվում են եկամուտների հաշվին:
3) Գնանշվող բաժնետոմսերի հնարավոր կորուստների պահուստի ձևավորման կարգը.

ա. Գնանշվող բաժնետոմսերի հնարավոր կորուստների պահուստին մասհանումները կատարվում են թողարկողի բաժնետոմսերի ամբողջ պորտֆելի գծով՝ դրա շուկայական միջին արժեքը հաշվեկշռային (ձեռք բերման) միջին արժեքի համեմատությամբ նվազելու դեպքում: Տվյալ թողարկողի բաժնետոմսի հաշվեկշռային միջին արժեքը որոշվում է որպես դրանց ձեռքբերման փաստացի արժեքների միջին կշռված մեծություն: Սույն կարգի շրջանակումտվյալ թողարկողի բաժնետոմսի միջին շուկայական արժեքը որոշվում է որպես նախորդ եռամսյակի ընթացքում բորսայում տվյալ բաժնետոմսի շրջանառության ծավալներով կշռված առք ու վաճառքի միջին գին:

բ. Պահուստին կատարվող մասհանումների գումարը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Մ(1)^1 =(ՀԱ-ՇԱ)ՀՔ-ՆՊ,$$

որտեղ՝

$Մ(1)^1$ - պահուստին կատարվող մասհանումների գումարն է,

ՀԱ - բաժնետոմսերի հաշվեկշռային միջին արժեքն է,

ՇԱ - բաժնետոմսի միջին շուկայական արժեքն է,

Ք - տվյալ թողարկողի արժեթղթերի քանակն է,

ՆՊ - տվյալ բաժնետոմսի պորտֆելի գծով նախկինում ձևավորված

պահուստի մեծությունն է:

գ. Եթե գնանշվող բաժնետոմսերը Բանկի կողմից դասակարգվել են որպես վերավաճառքի նպատակով ձեռք բերված կամ վաճառքի համար նախատեսվող, սակայն չեն օտարվել մեկ տարվա ընթացքում, ապա դրանց գծով ձևավորվում է հնարավոր կորուստների պահուստ սույն կարգի 97 կետի 3-րդ ենթակետի բ կետում նշված կարգով: Ընդ որում, եթե այդ ընթացքում նշված բաժնետոմսի շուկայական նվազեցումներն արտացոլվել են դրանց շուկայական արժեքի ճշտման հաշիվներում, ապա դրանց կրեդիտային մնացորդների չափով կատարվում է ճշտում (ծախսերի կամ կապիտալի բաժնի համապատասխան հաշիվների հետ թղթակցությամբ) այդ գումարը ձևակերպելով որպես բաժնետոմսերի գծով ձևավորվող պահուստի սկզբնական մեծություն:

դ. Եթե Բանկը մտադրվում է սույն կարգի 96 կետի 2-րդ ենթակետի գ կետում դասակարգված արժեթղթերը վաճառել և դրանք հաշվառման է վերցնում «Վաճառքի համար նախատեսվող արժեթղթեր » հաշվում, ապա կատարվում է դրանց գծով նախկինում պահուստավորված գումարի ճշտում (համապատասխան չափով պակասեցնելով ծախսերը)՝ միաժամանակ նույն գումարն արտացոլելով այդ արժեթղթերի շուկայական արժեքի ճշտման հաշվով՝ կապիտալի բաժնի համապատասխան հաշվի հետ թղթակցությամբ:

ե. Սույն կարգի 97 կետի 3-րդ ենթակետի բ կետին համապատասխան յուրաքանչյուր թողարկողի բաժնետոմսերի գծով ձևավորվող պահուստի մեծությունը ճշտվում է ոչ ուշ, քան եռամսյակի վերջին աշխատանքային օրվա դրությամբ:

98. Չգնանշվող բաժնետոմսերի (ներդրումների) պահուստի ձևավորման կարգը

1) Չգնանշվող բաժնետոմսերի (ներդրումների) պահուստի մասհանումները կատարվում են յուրաքանչյուր թողարկողի բաժնետոմսերի և /կամ ներդրման ամբողջ գումարի գծով՝ դրանց ընթացիկ արժեքը հաշվեկշռային (ձեռքբերման) միջին արժեքի համեմատությամբ նվազելու դեպքում:
2) Չգնանշվող բաժնետոմսերի հաշվեկշռային միջին արժեքը որոշվում է որպես նախորդ եռամսյակում դրանց ձեռքբերման արժեքների միջին կշռված մեծություն: Յուրաքանչյուր թողարկողի չգնանշվող բաժնետոմսի ընթացիկ արժեքը որոշվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$ԸԱ(^1) = \frac{(Ա-Պ)ХԳ,}{Ք}$$

որտեղ՝

ԸԱ(¹) - տվյալ թողարկողի մեկ բաժնետոմսի ընթացիկ արժեքն է,

Ա - թողարկողի ակտիվների հանրագումարն է,

Պ - թողարկողի պարտավորություններն են,

Ք - տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակն է,

Գ - արժեքի ճշտման գործակից, որը բնութագրում է թողարկողի ֆինանսական կայունությունը:

Թողարկողի ֆինանսական կայունությունը բնութագրող §Գ՝ գործակցի մեծությունը սահմանվում է՝ կախված թողարկողի շրջանառու ակտիվների (Աշ) և ընդհանուր ակտիվների (Ակ) հարաբերակցությունից հետևյալ միջակայքերում՝

ա/ Գ=1, եթե Աշ/ Ակ > 0.5

բ/ Գ= 0.7, եթե 0.5>Աշ/Ակ> 0.3

գ/ Գ= 0.5, եթե Աշ/Ակ < 0.3:

ԸԱ(¹)-ի բացասական մեծության դեպքում այդ գումարի չափով նվազեցվում է նախկինում ձևավորված պահուստը:

3) Ներդրումների ընթացիկ արժեքը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$ԸԱ(^2) = (Ա - Պ) \times Ն (\%) \times Գ$$

որտեղ՝

Ն (%) - կանոնադրական հիմնադրամում ներդրումն է (բաժնեմասը) տոկոսային արտահայտությամբ,

Ա, Պ, Գ – 2 կետի 98 ենթակետում նշված տարրերն են:

4) Պահուստին կատարվող մասհանումների գումարը որոշվում է հետևյալ բանաձևերի միջոցով՝

ա.չգնանշվող բաժնետոմսի համար՝

$$Մ(2) =(ՀԱ-ԸԱ(1))ՀՔ-ՆՊ,$$

որտեղ՝

Մ(2) - պահուստին կատարվող մասհանումների գումարն է

ՀԱ - բաժնետոմսի հաշվեկշռային միջին արժեքն է

ԸԱ - տվյալ թողարկողի մեկ բաժնետոմսի ընթացիկ արժեքն է

Ք - տվյալ թողարկողի բաժնետոմսերի քանակն է

ՆՊ - տվյալ բաժնետոմսի գծով նախկինում ձևավորված պահուստի մեծությունն է:

Մ(2) բացասական մեծության դեպքում այդ գումարի չափով նվազեցվում է նախկինում ձևավորված պահուստը:

բ. ներդրումների համար՝

$$Մ(3) = ՀՆ-ԸՆ-ՆՊ,$$

որտեղ՝

ՀՆ - ներդրումների հաշվեկշռային արժեքն է

ԸՆ - ներդրումների ընթացիկ արժեքն է

ՆՊ - տվյալ ներդրման գծով նախկինում ձևավորված պահուստի մեծությունն է:

Մ(3) բացասական մեծության դեպքում այդ գումարի չափով նվազեցվում է նախկինում ձևավորված պահուստը:

5) Բանկի կողմից չգնանշվող բաժնետոմսերի վերադասակարգման դեպքերում (սույն կարգի 96 կետի 2-րդ ենթակետի ա, բ, կետերից կամ գ, կետին կամ հակառակը)

պահուստի մեծության ճշտումները կատարվում են սույն կարգի 97 կետի 3-րդ ենթակետի գ կետում նախատեսված կարգով:

6) Չգնանշվող բաժնետոմսերի և/կամ ներդրումների գնահատումն ու պահուստի մեծության ճշտումը Բանկն իրականացնում է տարին մեկ անգամ (թողարկողի ֆինանսական հաշվետվությունների արդյունքներով):

99. Ինվեստիցիոն արժեթղթերի անհուսալի ճանաչումը

1) Ժամկետային արժեթղթերն անհուսալի են ճանաչվում ժամկետանց դառնալու 181-րդ օրը, ինչպես նաև այն դեպքում, երբ թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել, լուծարվել է առանց իրավահաջորդության կամ վավերացվել է վերջինիս կողմից պարտքի մարման անհնարինությունը՝ անկախ արժեթղթերի մարման ժամկետը լրանալուց և նպատակայնությունից:
2) Անժամկետ արժեթղթերն անհուսալի են ճանաչվում, եթե թողարկողն օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկ է ճանաչվել կամ լուծարվել է առանց իրավահաջորդության:

100. Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի օգտագործման կարգը

1) Պահուստի միջոցներն օգտագործվում են բացառապես սույն կարգի համաձայն անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրման համար: Եթե տվյալ արժեթղթի ձևավորված պահուստի միջոցները չեն բավարարում դրանց արժեքի դուրսգրման համար, ապա այդ տարբերության չափով լրացուցիչ մասհանում է կատարվում պահուստին և այնուհետև անհուսալի ճանաչված արժեթղթերի արժեքը դուրս է գրվում պահուստի միջոցների հաշվին:
2) Անհուսալի ճանաչված արժեթղթերը դուրս են գրվում « Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների արժեզրկման պահուստ » և « Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների արժեզրկման պահուստ » «Ինվեստիցիոն արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստ» հաշիվներից սույն կարգի համաձայն դրանց անհուսալի դառնալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջին աշխատանքային օրը:
3) Սույն կարգի 96 կետի 6-րդ ենթակետտում նշված այն գումարները, որոնք սահմանված կարգի համաձայն հաշվեգրվել են Բանկի եկամուտներին, սակայն չեն մարվել (վճարվել) նախատեսված ժամկետներում, դուրս են գրվում՝
   ա. դրանց ժամկետանց դառնալու օրվանից հաշված 90-րդ օրը,
   բ. սույն կարգին համապատասխան անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրման օրը:
4) Թողարկողի անվճարունակության հետևանքով անհուսալի ճանաչված արժեթղթերի դուրսգրումը Բանկի հաշվեկշռից չի համարվում այդ պարտավորության անվավեր ճանաչում:

101. Բանկի ծանուցման հաշիվներում հաշվառվող արժեթղթերը և տոկոսները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում ծանուցման հաշիվներից, եթե դրանց նկատմամբ պահանջի իրավունքի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված վաղեմության ժամկետը լրացել է: Եթե դրանց նկատմամբ պահանջի իրավունքի՝ ՀՀ իրավական ակտերով սահմանված վաղեմության ժամկետն ավելի ուշ է, քան պարտապանի՝ ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով սնանկ ճանաչման

ժամկետն է, ապա ծանուցման հաշիվներից արժեթուղթը և տոկոսները (կամ դրանց մի մասը) դուրս են գրվում պարտապանի ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով սնանկ ճանաչվելու պահից:

1) Նախորդ հաշվետու տարիներին համախառն եկամտից նվազեցրած արժեթղթերի և տոկոսների (կամ դրանց մի մասի) գումարով, որոնց պահանջի իրավունքի վաղեմության ժամկետը լրացել է և որոնց գումարը յուրաքանչյուր պարտապանի գծով չի գերազանցում 1 միլիոն ՀՀ դրամը, համախառն եկամուտը չի ավելացվում, իսկ այն գումարների գծով, որոնց պահանջի իրավունքի վաղեմության ժամկետը լրացել է և որոնց գումարը յուրաքանչյուր պարտապանի գծով գերազանցում է 1 միլիոն ՀՀ դրամը, համախառն եկամուտը չի ավելացվում միայն այն դեպքում, երբ վերը նշված գումարների պահանջի իրավունքի վաղեմության ժամկետը լրանալու պահին կամ մինչ այդ Բանկը հայց է ներկայացրել դատարան պարտքի վերադարձման պահանջի վերաբերյալ:
2) Արժեթղթերի գծով պարտավորության լրիվ կամ մասնակի մարման կամ դրանց օտարման դեպքում համապատասխան չափով ճշտվում է պահուստի ընդհանուր մեծությունը՝ կատարված մասհանումների գումարներն ուղղելով Բանկի տվյալ հաշվետու ժամանակահատվածի եկամուտներին:
3) Սույն կարգի համաձայն անհուսալի ճանաչված և պահուստի հաշվին հաշվեկշռից դուրս գրված արժեթղթերի, ինչպես նաև սույն կարգի 96 կետի 6-րդ ենթակետի համաձայն դուրս գրված գումարների (կուտակված եկամուտների) գծով պարտավորությունների լրիվ կամ մասնաակի մարման դեպքում վերականգնված գումարներն ամբողջությամբ հաշվեգրվում են Բանկի տվյալ հաշվետու ժամանակահատվածի եկամուտներին:
4) Բանկի ծանուցման հաշիվներում հաշվառվող և արդեն իսկ դուրս գրված արժեթղթերի, տոկոսների և (կամ) զեղչատոկոսի (կամ դրանց մի մասի) ներման (անհատույց զիջելու) դեպքում, Բանկի համար այդ գումարները համարվում են մարված և ներված (կամ անհատույց փոխանցված կամ անհատույց զիջված) և այդ գումարների չափով ավելացվում է Բանկի հաշվետու տարվա համախառն եկամուտը:
5) Իրավաբանական անձանց կողմից թողարկված արժեթղթերը ենթակա են գնահատման տարին մեկ անգամ մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը, եթե կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվություններում կատարվել են փոփոխություններ, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել թողակողի վարկունակության վրա: Թողարկողի ֆինանսական վիճակի գնահատումը կատարվում է Բանկի կառավարման իրավասու մարմինների կողմից հաստատված ռիսկերի կառավարման գործընթացը կանոնակարգող համապատասխան ներքին իրավական ակտերով, «Ձեռնարկատիրական գործունեության վարկավորման» ընթացակարգով, տվյալ ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող կանոնադրություններով և սույն կարգով: Սույն կետով սահմանված թողարկողի վարկունակության գնահատման գործընթացը իրականացվում է պատասխանատու ստորաբաժանման, ռիսկերի կառավարման վարչության և Կորպորատիվ վաճառքների համակարգման վարչության կողմից:
6) Բանկում ներդրումների պարբերական մոնիտորինգի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումների պարտականությունների շրջանակը

սահմանվում է Բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին աուդիտի և ներքին վերահսկողության իրականացման գործընթացը կանոնակարգող համապատասխան ներքին իրավական ակտերով:

7) Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի հաշվարկման և արժեթղթերի դասակարգման գործընթացը իրականացվում է սույն գլխով սահմանված կարգով՝ պատասխանատու և/կամ համապատասխան ստորաբաժանումների կողմից ներկայացված եզրակացության հիման վրա Ն(ԱՊ) կոմիտեի որոշմամբ:
8) Ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման, հաշվառման և հաշվապահական ձևակերպումների գործընթացը իրականացվում է հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների վարչության կողմից սույն կարգի 101 կետի 7-րդ ենթակետի համաձայն:
9) Բանկի խորհրդին և վարչությանը ներդրումային գործունեության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման պատասխանատուները և ժամկետները, ինչպես նաև Բանկի ժամկետանց ակտիվների հետստացման միջոցառումները սահմանվում են Բանկի խորհրդի կողմից հաստատված Բանկի խորհրդի և վարչության կանոնադրություններով:

ԳԼՈՒԽ 22. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

102. Հաճախորդներին պատկանող արժեթղթերի և դրամական միջոցների հետ կապված հաճախորդների շահերի պաշտպանության նպատակով Բանկը պարտավոր է.

1) պահպանել տեղեկատվություն, վարել այնպիսի հաշվառում և հաշիվներ, որոնք թույլ կտան ցանկացած պահի և առանց ուշացման առանձնացնել յուրաքանչյուր հաճախորդի միջոցները այլ հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներից,
2) պահպանել տեղեկատվությունը և վարել հաշվառումն ու հաշիվներն այնպես, որ ապահովվի դրանց ճշգրտությունը և համապատասխանությունն իր տիրապետմանը և(կամ) կառավարմանը հանձնված հաճախորդների դրամական միջոցներին և արժեթղթերին,
3) պարբերաբար իրականացնել համեմատություններ, ճշգրտումներ իր և այն անձանց մոտ առկա՝ հաճախորդների միջոցների վերաբերյալ հաշիվների, տեղեկատվության, գրանցումների միջև, որոնց մոտ պահվում են հաճախորդների միջոցները,
4) ապահովել, որ երրորդ անձի մոտ պահվող ցանկացած հաճախորդի արժեթղթերը հնարավոր է առանձնացնել Բանկին պատկանող արժեթղթերից, ինչպես նաև երրորդ անձի արժեթղթերից՝ արժեթղթերի հաշիվների տարբեր անվանմամբ կամ պաշտպանության համարժեք մակարդակ ապահովող այլ միջոցներով: Սույն կետով սահմանված պահանջը չի տարածվում Բանկի կողմից իր հաճախորդին պատկանող պետական արժեթղթերը պետական պարտատոմսերի ենթապահառու հանդիսացող անձին փոխանցման դեպքում, եթե պետական պարտատոմսերի ենթապահառուի մոտ Բանկի և նրա հաճախորդների արժեթղթերի համար առանձին (տարբեր անվանմամբ) հաշիվների բացումն անհնար է,

5) ձեռնարկել անհրաժեշտ կազմակերպական միջոցներ հաճախորդների միջոցների անբարեխիղճ կամ չթույլատրված օգտագործման, մեքենայությունների, թերի հաշվառման կամ անտեսման արդյունքում հաճախորդների միջոցների կամ այդ միջոցների հետ կապված իրավունքների կորստի ռիսկը կառավարելու համար:

103. Բանկը իրավունք ունի հաճախորդի արժեթղթերը պահել հաճախորդի համար երրորդ անձի մոտ բացված հաշվում (հաշիվներում): Երրորդ անձանց ընտրության և նշանակման գործընթացում Բանկը պետք է հաշվի առնի երրորդ անձի փորձառությունն ու համբավը, ինչպես նաև հաճախորդի արժեթղթերի պահառությանը վերաբերող իրավական պահանջները և գործարար շրջանառության սովորույթները՝ հաճախորդների իրավունքների վրա դրանց բացասական ազդեցությունից խուսափելու նպատակով:

104. Եթե Բանկը նախատեսում է պահել հաճախորդի արժեթղթերը երրորդ անձի մոտ, որի երկրում առկա են առանձնահատուկ պահանջներ և վերահսկողություն այլ անձանց պատկանող արժեթղթերի պահառության նկատմամբ, ապա Բանկը իրավունք չունի պահել հաճախորդի արժեթղթերը տվյալ երկրում գործող այնպիսի անձի մոտ, որը ենթակա չէ նման պահանջների կամ վերահսկողության:

105. Բանկն իրավունք չունի պահել հաճախորդների արժեթղթերը այլ երկրում գտնվող երրորդ անձի մոտ, որտեղ չի կարգավորվում այլ անձանց պատկանող արժեթղթերի պահառությունը, բացառությամբ՝ եթե առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը.

1) արժեթղթերի կամ դրանց հետ կապված ներդրումային ծառայությունների բնույթը պահանջում է, որ այդ արժեթղթերը պահվեն տվյալ երկրում գտնվող անձի մոտ,
2) արժեթղթերը պատկանում են Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի համաձայն որպես պրոֆեսիոնալ դասակարգված հաճախորդին և այդ հաճախորդը Բանկին տվել է գրավոր ցուցում կամ համաձայնություն իր արժեթղթերը տվյալ երկրում գտնվող անձի մոտ պահելու վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 23. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

106. Բանկին արգելվում է իրականացնել արժեթղթերով ֆինանսավորման գործարքներ հաճախորդին պատկանող արժեթղթերով կամ այլ կերպ օգտագործել այդ արժեթղթերն ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների, բացառությամբ սույն կարգի 107 և 108 կետերով նախատեսված դեպքերի:

107. Բանկը կարող է օգտագործել հաճախորդի արժեթղթերը միայն հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1) հաճախորդը նախապես տվել է իր գրավոր համաձայնությունը արժեթղթերի օգտագործման համար՝ մատնանշելով օգտագործման պայմանները: Նման համաձայնությունը կարող է պարունակվել հաճախորդի հետ կնքվող ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրում,
2) հաճախորդի արժեթղթերի օգտագործումը պետք է սահմանափակվի միայն հաճախորդի կողմից մատնանշված պայմաններով:

108. Բանկը կարող է երրորդ անձի մոտ բացված ամփոփ հաշվում կամ նմանատիպ այլ հաշվում պահվող՝ հաճախորդին պատկանող արժեթղթերով իրականացնել արժեթղթերով ֆինանսավորման գործարքներ կամ այլ կերպ օգտագործել կամ տիրապետել երրորդ անձի մոտ բացված ամփոփ հաշվում կամ նմանատիպ այլ հաշվում պահվող հաճախորդի արժեթղթերն ի շահ իրեն կամ իր այլ հաճախորդների, եթե ապահովված են սույն կարգի 107 կետում նշված պայմանները:

109. Պատասխանատու ստորաբաժանումը էլեկտրոնային գրանցամատյանում իրականացնում է գրանցումներ և հաշվառում այն հաճախորդների վերաբերյալ, որոնց արժեթղթերն օգտագործվել են իրենց համաձայնությամբ և իրենց մատնանշած պայմաններով, ինչպես նաև յուրաքանչյուր հաճախորդի գծով օգտագործված արժեթղթերի քանակի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 24. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՐԾԱՐՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

110. Պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցը տեղեկացնում է հաճախորդին, որ արժեթղթերում իրականացված ներդրումները ռիսկային են և, միաժամանակ նկարագրում է արժեթղթերի շուկայում գործարքներ կատարելիս ինչ ռիսկերի հետ է առնչվում ներդրողը.

1) Ֆինանսական գործիքների գների փոփոխության ռիսկ: Արժեթղթերի շուկայական գները և դրանց փոփոխությունները չեն գտնվում Բանկի հսկողության ներքո, որի հետևանքով արժեթղթերում ներդրման դեպքում հնարավոր է նաև հաճախորդի պորտֆելի արժեքի նվազում, ընդհուպ մինչև ամբողջ պորտֆելի կորուստը (մարժինալ գործարքների դեպքում հնարավոր կորուստները կարող են գերազանցել հաճախորդի կողմից ներդրած սկզբնական գումարի մեծությունը):
2) Իրացվելիության նվազման ռիսկ: Այս ռիսկը կապված է տվյալ գործիքի նկատմամբ շուկայի այլ մասնակիցների հետաքրքրության նվազման հետ: Ֆինանսական գործիքի իրացվելիությունը կախված է թողարկողների կորպորատիվ գործողություններից, նրանց ֆինանսական գործունեությունից, ընդհանուր շուկայի վիճակից, բորսաների և առևտրային հարթակների ներքին կանոններից, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ ֆինանսական գործիքի գնի, հետևաբար նաև հաճախորդի պորտֆելի արժեքի վրա:
3) Արտաքին միջավայրից առաջացող, ինչպես նաև օրենսդրական կարգավորման փոփոխության հետ կապված ռիսկեր, որոնք կապված են շուկաները կարգավորող պետական մարմինների գործողությունների հետ, որի հետևանքով հաճախորդը կարող է կրել կորուստներ:
4) Ենթակառուցվածքային ռիսկ: Այս ռիսկը կապված է դեպոզիտարիաների, բորսաների, հաշվարկաքլիրինգային կազմակերպությունների աշխատանքների հետ, որոնց գործունեության ընդհատումները կարող են բերել հաճախորդի ակտիվների (ինչպես դրամական միջոցների, այնպես էլ արժեթղթերի) կորուստների:
5) Էլեկտրոնային առևտրային համակարգերի օգտագործման հետ կապված գործառնական ռիսկեր: Այս ռիսկերը կապված են ծրագրային ապահովման, համակարգչային սարքավորումների, ծրագրային ապահովման անսարքության առաջացման, էլեկտրասնուցման, ինտերնետի հետ կապված խնդիրների, կապի

ընդհատումների և այլնի հետ, որոնք կարող են առաջ բերել հաճախորդի ակտիվների կորուստներ:

6) Տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման հետ կապված ռիսկեր. հաճախորդը տեղեկացվում է այն մասին, որ ներդրումային գործունեությունը պարունակում է ռիսկեր՝ կապված մատուցվող ծառայությունների էլեկտրոնային բնույթի հետ, ինչպիսիք են, օրինակ, հուսալի կապի բացակայությունը, էլեկտրաէներգիայի անջատման հնարավորությունը, ծրագրային ապահովման աշխատանքի խաթարումը և այլն:
7) Այլ ռիսկեր: Վերը թվարկված ռիսկերի ցանկը սպառիչ չէ: Ներդրումային գործունեությունը կարող է ուղեկցվել նաև այլ ռիսկերով:
8) Բանկը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության հետևանքով էլեկտրոնային առևտրի համակարգերի աշխատանքի ընդհատման համար: Բանկը նաև պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց գործունեության արդյունքում Բանկի և հաճախորդի միջև փոխանցվող տեղեկատվության՝ երրորդ անձանց հասանելի դառնալու համար:

ԳԼՈՒԽ 25. ՊԱՏՎԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

111. Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում հաճախորդի կողմից ներկայացված պատվերը:

112. Պատվերի ձևը ներկայացվում է հավելված 2-ում, միաժամանակ պայմանագրով կարող են նախատեսվել այլ տեղեկություններ, որոնք սահմանվում են Բանկի և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ: Հաճախորդը կարող է ընտրել պատվերի ներկայացման հետևյալ եղանակներից մեկը՝ թղթային (ներառյալ փաստաթղթերի փոխանցումը փոստով), ֆաքսիմիլային,էլեկտրոնային, հեռախոսով:

1) Թղթային ձևով պատվերը ներկայացվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Բանկում, մյուս օրինակը «պատվերն ընդունված է» նշագրմամբ և պատասխանատու ստորաբաժանման աշխատակցի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին: Թղթային եղանակով պատվերը ներկայացնելու դեպքում աշխատակիցը ստուգում է պատվերը ներկայացնող անձի լիազորությունը:
2) Էլեկտրոնային եղանակով պատվերը պետք է ուղարկվի միայն Բանկի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեով: Այլ հասցով ուղարկված պատվերը համարվում է չստացված: Էլեկտրոնային եղանակով պատվերը ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցը ստուգում է՝

   ա. լրացված վավերապայմանների ամբողջությունը,
   բ. պատվերում ներառված այլ լրացուցիչ վավերապայմանների առկայությունը, որոնք նախատեսվել են բրոքերային սպասարկման պայմանագրով,
   գ. ստորագրող անձանց լիազորությունները,
   դ. ստորագրության և առկայության դեպքում (կնիքի) համապատասխանությունը բանկային հաշվի բացման համար ներկայացված ստորագրության և կնիքի նմուշի հետ, որի էլեկտրոնային սքանավորված տարբերակը հաճախորդների սպասարկման բաժնի կողմից ուղարկվել է պատասխանատու ստորաբաժանման աշխատակցին:

3) Պատվերը ստուգելուց հետո պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցը ստորագրում է պատվերը և ֆիքսում է ընդունման ժամը, որից հետո հաճախորդին ուղարկում է պատվերի ընդունման կամ մերժման մասին համապատասխան հաղորդագրություն: Հաղորդագրությունը ուղարկվում է հաճախորդի կողմից տրամադրված կամ էլեկտրոնային հասցեով:
4) պատվերը ներկայացնելու համար, հաճախորդը նախապես հեռախոսով պետք է տեղեկացնի պատասխանատու ստորաբաժանման աշխատակցին պատվերը ուղարկելու փաստի մասին: Պատվերը պետք է ուղարկվի միայն Բանկի կողմից տրամադրված հատուկ հեռախոսահամարով: Այլ հեռախոսահամարով ուղարկված պատվերը համարվում է չստացված: Պատվերի ստուգման գործընթացը իրականացվում է սույն կարգի 112 կետի 2-րդ ենթակետի ա-ից դ կետերով սահմանված կարգով:
5) Հաճախորդի կողմից հեռախոսով պատվերը կարող է ընդունվել, եթե այն իրականացվում է հաճախորդի նախնական համաձայնությամբ և պահպանվում է Բանկի կողմից սույն կարգի 51 կետի պահանջները: Հեռախոսով պատվերի ընդուման տեխնիկական և տեղեկատվական անվտանգության պահանջները, ինչպես նաև իրականացման գործընթացը սահմանվում են Բանկի վարչության նախագահի կարգադրությամբ:
6) Պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցը իրավունք ունի մերժել հաճախորդի պատվերի ընդունումը հետևյալ դեպքերում.

   ա. հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության դեպքում.

   բ. հավելված 2-ով ներկայացված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված պատվերի դեպքում.

   գ. եթե հաճախորդի դրամական միջոցները կամ արժեթղթերը, որոնց գծով տրվել է պատվերը ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են.

   դ. եթե հաճախորդի բանկային հաշվում կամ դեպո հաշվում բացակայում են համապատասխան դրամական միջոցները կամ արժեթղթեր.

   ե. եթե հաճախորդի կողմից ներկայացված պատվերով գործարքի կատարումը հակասում է հաճախորդի ներդրումային նպատակներին կամ չեն համապատասխանում ՀՀ օրենսդրության կամ սույն կարգի պահանջներին:
7) Պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցը «Գործառնական օր» համակարգում համեմատում է սույն կարգով սահմանված հաճախորդների համար բացված բանկային հաշիվների հետ կապված հետևյալ տեղեկատվությունը՝ բանկային հաշիվ բացելու դիմում-պայմանագրը, ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդի անձնագրի, իսկ իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդի համար լիազորված անձանց անձնագրերի, ինչպես նաև իրավաբանական անձի/անհատ ձեռնարկատերի դեպքում պետական ռեգիստրի գրանցման վկայականի իր համապատասխան ներդիրներով և իրավաբանական անձի ստորագրությունների նմուշի քարտի սքանավորված էլեկտրոնային տարբերակները:

ԳԼՈՒԽ 26. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

113. Ներդրումային ծառայությունների պայմանների վերաբերյալ Բանկի ինտերնետային կայքում (տնային էջում) տեղեկատվության տեղադրման գործընթացը իրականացվում է Բանկի վարչության կողմից հաստատված «Ինտերնետային կայքում տեղեկատվության հրապարակման և փոփոխությունների իրականացման» ընթացակարգով:

114. Բանկում ներդրումային ծառայությունների գծով ֆիզիկական անձանց, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող անձանց կողմից Բանկին գույքային պահանջների ներկայացման հետ կապված բողոք-պահանջների ընդունման, քննարկման, դրանց արդյունքում որոշումների ընդունման և պատասխանելու գործընթացը կարգավորվում է Բանկի խորհրդի կողմից հաստատված «Հաճախորդների կողմից ներկայացված բողոք-պահանջների քննության ընթացակարգի» համաձայն, իսկ իրավաբանական անձանց միկրոձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող անձանց) բողոք-պահանջների գործընթացը կարգավորվում է բանակցությունների միջոցով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

115. Բանկը պարտավոր է առնվազն 5 տարվա ընթացքում պահպանել Պայմանագիրը և դրա հիման վրա արժեթղթերով կատարված գործարքների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը և Հաճախորդի առաջին իսկ պահանջով նրան տրամադրել դրանց պատճենները՝ վավերացված Բանկի կնիքով և «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ: Նշված փաստաթղթերի պատճենահանման ծախսերը կրում է Հաճախորդը:

116. ՀՀ օրենսդրության համաձայն՝ ռեզիդենտ իրավաբանական անձ հանդիսացող Հաճախորդները ինքնուրույն են իրականացնում Արժեթղթերով գործարքների արդյունքում ծագած հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը: Բանկն Արժեթղթերի գործարքների վերաբերյալ բավարար տեղեկություն է տրամադրում Հաճախորդներին, որպեսզի վերջիններս հնարավորություն ունենան ինքնուրույն իրականացնել իրենց հարկային պարտավորությունների հաշվարկներն ու մուծումները:

117. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկն ինքն է իրականացնում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ հաճախորդների հարկային պարտավորությունների հաշվառումն ու վճարումը:

118. Սույն կարգով սահմանված ներդրումային ծառայությունների մատուցման և արժեթղթերի առք ու վաճառքի պայմանագրերի և ռեպո/ հակադարձ ռեպո պայմանագրերի օրինակելի ձևերը, ինչպես նաև սույն կարգով սահմանված գործառնություններ կատարելու համար հիմք հանդիսացող թղթային կամ էլեկտրոնային հանձնարարականների ձևերը հաստատվում են Բանկի վարչության նախագահի կարգադրությամբ:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ սեփականությունը:
Ոչ լիազորված վերարտադրությունը արգելված է